ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «27» հունվարի, 2017 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 05-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի N 31-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2013 թվականի օգոստոսի 26-ի «Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացում» ծախսային ծրագրի ֆինանսական միջոցներով սարքավորման ձեռքբերման հանձնարարության պայմանագրի ձևը հաստատելու մասին» N 31-Ա/Ք հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
«27»հունվարի, 2017 թ.
N 05-Ա հրամանի

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր № _____

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

ք. Երևան «___»_____ 20.. թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանի (այսուհետ՝ Կոմիտե), որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և, _____ը, ի դեմս տնօրեն/ռեկտոր _____ի

(գիտական կազմակերպության անվանումը) *(անուն, ազգանուն)*

(այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի № 450-րդ հոդվածի, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Պայմանագրով Կոմիտեն ՀՀ 20.. թվականի պետական բյուջեով նախատեսված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծախսային ծրագրի «Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացում» ենթածրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցներից Կազմակերպությանն է տրամադրում ֆինանսական միջոցներ՝ Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող նախահաշվով հաստատված, Կազմակերպության գործունեության համար անհրաժեշտ _____ձեռքբերման համար:

(սարքի, սարքավորման, աշխատանքների անվանումը)

2. Պայմանագրի գինը

Պայմանագրի գինը (տրամադրվող ֆինանսական միջոցների չափը) կազմում է _____ ՀՀ դրամ:

(թվերով և բառերով)

3. Պայմանագրի կատարման ժամկետը

3.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և դադարում է Պայմանագրի 4.4.2 կետով նախատեսված հաշվետվության ու դրան կից փաստաթղթերի ներկայացմամբ:

3.2 Պայմանագիրը կարող է վաղաժամ լուծվել գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.3 Կոմիտեն ֆինանսական միջոցները փոխանցում է Կազմակերպության բանկային հաշվեհամարին՝ Պայմանագիրը կնքելու օրվանից 20 (քսան) օրվա ընթացքում:

4. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

4.1 Կոմիտեն իրավունք ունի.

4.1.1 ստուգել Կազմակերպության կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների իրականացման ընթացքը,

4.1.2 պահանջել սարքի, սարքավորման, աշխատանքների ձեռքբերմանն առնչվող փաստաթղթեր և այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

4.2 Կազմակերպությունն իրավունք ունի հրաժարվել Պայմանագրի կատարումից՝ Կոմիտեի կողմից Պայմանագրի 3.3 կետի խախտման դեպքում:

4.3 Կոմիտեն պարտավոր է Պայմանագրով սահմանված ժամկետում տրամադրել նախատեսված ֆինանսական միջոցները:

4.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

4.4.1 Պայմանագրով ստանձնած պարտականությունները կատարելիս առաջնորդվել ՀՀ գործող օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Գնումների մասին» և «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքների պահանջներով,

4.4.2 սարքի, սարքավորման, աշխատանքների ձեռքբերումից հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում Կոմիտե ներկայացնել հաշվետվություն՝ կից ներկայացնելով ձեռքբերման բոլոր փաստաթղթերի պատճենները (ձեռքբերման պայմանագիր, հանձնման-ընդունման ակտ, հաշիվ-ապրանքագիր և այլն),

4.4.3 Կոմիտեի պահանջով տրամադրել Պայմանագրի կատարման վերաբերյալ անհրաժեշտ ընթացիկ տեղեկատվություն,

4.4.4 Կոմիտեի միջոցով տրամադրված գումարը չծախսելու կամ ոչ ամբողջությամբ ծախսելու դեպքում գրավոր տեղեկացնել Կոմիտեին և չծախսված ֆինանսական միջոցները փոխանցել Կոմիտեի գանձապետական հաշվեհամարին:

5. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է

անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

7. Այլ պայմաններ

7.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

7.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

ԿՈՄԻՏԵ	**ԿԱՁՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**
ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե	_____ *(անվանումը)*
ք. Երևան, Օրբելի եղբայրների 22	_____ *(հասցեն)*
Հ/Հ 900011033033 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	_____ *(բանկային վավերապայմանը)*
Աշխատակազմի ղեկավար՝ _____	Տնօրեն/ռեկտոր՝ _____ *(ստորագրություն)*
ԼԵՎՈՆ ՄԱՐԴՈՅԱՆ	_____ *(անուն, ազգանուն)*
Կ.Տ.	**Կ.Տ.**

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«___» _____ 20.. թ.
N _____ պայմանագրի

Հ/հ	Սարքի, սարքավորման, աշխատանքի անվանումը	Քանակը	Գումարը (հազար ՀՀ դրամ)
1			
2			
3			
Ընդամենը			

Կազմակերպության տնօրեն/ռեկտոր՝

_____ _____
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝

_____ _____
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.